թ) Աղթամար (?) էջմ. ԶԿ-1491, թլ. 115, 116, 117 ըստ Ասկեփու:

ժ) Կառւց (?) էջմ. ԺԵ-1491, թլ. 79, ՊՀի:

ժա) Երուսաղէմ, հ. 173, ԶԿ-1511, վասն երանելոյն Մուհամետայ ի Հայո:

ժբ) Կառւց (?) էջմ. ԶԶԳ-1534, թլ. ՀԳ ՊՀի:

ժգ) Վան. (?) էջմ. ԲԴ-1611, Ասկեփ. Երեք գլուխ:

ժդ) Երուս. հ. 11, ԲԶԳ-1634, թլ. ԼԲ, ԼԹ, Խ. Ասկեփ.:

ժե-իբ) Վենետիկ, ի ցուցակին Աւգերեանի-ձառնութիւն հ. Ա. էջ 496. ԱՀԳ-1224, հ. 286 և 975 ի պատմութեան Անորոպ Երէցի, հ. 489 ի պատմ. Կիրակոսի. - հ. 963. ի պատմ. Սոկրատայ. - Ասկեփոր. Լ էջ 355, Ասկեփ. ԻԳ. էջ 101, ձառնուտ. Պ. էջ 59, ձառնուտ. ԻԳ. էջ 503:

իդ-իդ) Վիեննա, ըստ Յուցակի Տաշհանի, հ. 224, ՊՀի-1428, էջ 582 և հ. 34. ԺԷ-ԺԲ Պար, էջ 191-192, ՊՀի:

իե) Էջմ. 1755/1714, ՊՂ-1441, ՊՀի: Այս Զ-ից Պ. Մառ Էջմիածնի Եղիտ վ-ից ստացել է մի ընդօրինակութիւն և նրանից տալիս է քաղաքաներ, բաղգատելով Արարատում (1888, 399-404) տպած բնագրի հետ, գտնում է տարբերութիւններ: Մենք ևս համեմատեցինք և զտանք, որ այդ Ասկեփորիկի բնագրիցն է և ոչ Շ-ի տնմիջական Զ-ից:

ԺԷ.

Զ-ի մէջ կայ մի ուշագրաւ տեղեկութիւն, որ ունի միայն Շ-ը և ուրիշ ոչ մի պատմագիր: «Եւ թաղաւորեաց տանն Հայոց Սմբատ որդի Աշոտայ ... և կապեաց նման քազ արեայ Հոռոմոց Առմաննուն և սիրէր զնա յուժ» (էջ 65): Ամբատի յունաց կայ-

սրից թագ ստանալը նորութիւն է և նոր առեղծւած, որովհետեւ ներկայացնում է ժամանակագրական խոշոր տարբերութիւն։ Աշում Բագրատունին վախճանւել է 889 թուին, հետեւ 890 թուին թագ է կուտում նրա որդի Սմբատը և թագաւորում մինչև 914 կամ 915 թ., 888—912 թւնքին Բիւզանդիոնի դահի վրայ բազմել էին Բարսեղ կայսեր երկու որդիները՝ Լիոն և Ալեքսանդր, մինչեւ Ռոմանոսը կայսր է դառնում 920—944 թ., մի տարի առաջ՝ 919 թ. կայսերական հրատարակւելով Ծիրանածին Կոստանդինի կողմից։

Ժամանակագրական աչքի ընկնող խոշոր հետաւորութիւնը կարելի է զանազան ձևով բացատրել, կամ կայսրների անուններն են շփոթել, կամ Սմբատի թագ ստանալու փաստն է մտացածին։

Մենք համակիր ենք հաւանական համարել անունների շփոթիւն։ Թէ և այդ դէպքում պիտի ընդունենք, որ Շ-ը իւր պատմութիւնը հասցել է մինչև գոնէ 920 թիւը, երբ Ռոմանոսն արդէն կայսր էր և Շ-ը գիտէր այդ բանը։

Այս ենթադրութիւնն էլ ունի որոշ գժւարութիւն։ Ենչպէս կարող էր պատմութիւն գրող Բագրատունի իշխանական տան մի անդամը այդպիսի մի կոպիտ սխալ թոյլ տալ, այն էլ իւր օրով ապրով մի կայսեր անւան նկատմամբ։

Կամ զուցէ Սմբատի թագաւորական դահ բարձրանալու և մահւան տարիները չայց պատմութիւն մէջ սրբագրութեան կարօտ են։ Ինչպէս էլ նայելու լինենք, առ այժմ Ռոմանոսի և Սմբատի ժամանակակցութիւնը և ոիրոյ փոխարարերութիւնը չ չլուծւած։

ԺԲ.

Շ-ի պատմութեան մէջ զանում ենք մի շաբք պատմական տեղեկութիւններ, որ հայ յայտնի պատմագիրներից միզ արդէն ծանօթ են, և երբ այդ տեղեկութիւնները բազգաւորում ենք միշտանց հետ, պարզում են Շ-ից առաջ հղող և աւելի ուշ՝ պատմական ճշտելու Այդ պատմագիրներն են նրանից առաջ Դիսու, ժամանակակից Յ. Կ. և Թ. Արծ., ի վերջոյ Ռւիտանէս։

Ամենից շատ են այն վաստերը, որ գտնում են Շ-ի և Շ-ի մամաւած իրար միանգամայն նման և յաճախ նաև դարձանել որովհետեւ Շ-ի որդեական էլի է արդեօք Շ-ի ազրիւրը, գժւար է դէպքիր, երբեմն նման դարձւածներով, բայց ուշագրավութեամբ

քննելով, տեսնում ենք, որ Ղ-ը չէ սկզբնազրիւրը։ Ցիշատակենք օրինակները։

1. Ապարահմանի որդի Մահմէտը (Թ. Արծ. էջ 99, Մահմէտ որդի Արզակի, նաև Վարդան էջ 63), ապստամբւում է և տիրում երուսաղէմին, երբ Հերակլ կայսրը զրազուած էր Պարսից պատերազմներով Քրիստոսի խաչը ազատելու համար։ Նախագէս Հրէաները Մահմէտի մօտ ուղարկում են մհամեծներ և ծերեր, ընծաներով և Մովսիսի գրքով, որ համելով Բաղդատ, ներկայանում են Մահմէտին և յայտնում, որ իրենք, ինչպէս և Մահմէտի ցեղը, նոյն Արքահամի ժառանգներն են, ուստի թող գայ և տիրի երուսաղէմին։ Բնչու պիտի ուրիշները տիրեն։ Մահմէտը իւր Ալի փիսայի և Ֆատմա քրոջ հետ գալիս և տիրում են երուսաղէմին, փախստական առնելով Հերակլ կայսեր կոստանդին և Թէոդորոս սրբիներին, որ Պարսկաստանից ազատւած Քրիստոսի Խաչը տանում էին Գողգոթայում բազմեցնելու։

Ղ-ը (Գլ. Ա, էջ 4) յիշատակում է Հրէաների պատգամաւութիւնը նման Շ-ին, միայն թէ Հերակլը արդէն կայսր չէ, այլ նրա որդի Կոստանդինը, որի զօրավարն է պարտութիւն կրում և Պաղեստինը թողնելով փախչում։ Քրիստոսի Խաչի մասին խօսք չկայ։

Շ-ի հաղորդածով արաբների տիրապետութեան մասին Հերակլի ժամանակ, աւելի է համապատասխանում պատմական տեղեկութիւններին (Տես Կրումբախեր, Պատմ. Բիւզ. Կայսրների իմ թարգմ. էջ 123 ևն)։ Ղ-ի պատմածին նման է Թ. Արծ. (էջ 101—102) և Մի. Անեցի (էջ 43—44)։

ԺԹ.

2.— Մենում է Հերակլ «և թագաւորեաց փոխանակ նորա լեզոն կայսրու Այդ ժամանակ Բաղդատի արքան էր Սմբ, որի զօրագիւն էր Ահմատ որդի Մահմէտայ։ Սա արշաւում է ձենաց դէմ, բանակում առ ափն գետոյն որ Կուր կոչի և պատգամաւոր ուղարկում ձենրակուրին, ճնազանգել իրեն, առաջ հարկ, ծառայ և ազատիներ լին։ Ձենրակուրը Հիւ զինուորների կանացի շորեր հազցնելով, առաջարկում է Ահմատին մարդիկ ուղարկել և տանել այդ կանանցը։ Այդպիսի խորամանկ միջոցով ձենրակուրը կոտորում է Արաբներին։

Ղ-ի մօտ համարեա բառացի կայ նոյն պատմութիւնը, տարբեր է միայն գետի անունը. Օբանակէր առ եզր գետոյն հզօրագունի, որ Յօստիսն կոչի» (տես էջ 37—40, Հմմտ. Մի. Անեցի էջ 45)։

Դ. Եղ գրում է, որ Մահմետը պահանջեց լի աղջիկ և որ Ճենքակուրը սայլերի վրայ նստեցրեց ԽՌ ծպտեալ զինուրներ, Եղ ունի լի. և երկու թւերի միացում. «Ծրաւմանի քո լեբեալ և մ ծառայս և զալախնեայս իրեն և օթանասուն հազար»:

3.—Միւս տարին Ահմատը գնում է ի վերայ Թարբանդին, «զոր կանգնեաց մեծն Աղեքսանդրոս». Առնելով այդ քաղաքը, Ամրի եղայր Մալիմի հետ յարձակում են Հոնաց երկրի վրայ և չարաշար ջարդ կրելով, մի կերպ ազատուում:

Դ. (գլ. ԺԲ, էջ 40—42) ունի նոյն պատմութիւնը այսպիսի տարբերութիւններով. Սուլէյմանն է իշխում արաբներին և նա է իւր զօրավար Մալիմին ուզարկում Հոների զէմ: Սա առնում է Թարբանդ քաղաքը և պարիսպները քանդելիս աշտարակի հիմքի մէջ «գոտին վէմ մի մեծ», վրան գրոշմւած «Մալիմանոս ինքնակալ կայսր շինեաց զբաղաք և զաշտարակս զայս»: Տարբերութիւններ կան նաև Ալաններից պարտութիւն կրելու պատմութիւն մէջ:

Ի.

4.—Քարձեալ Մալիմ եղայրն արքային բազտագայ Ամուս և Ահմատ զօրավարն զօրք հաւաքելով յարձակում են Հոռոմոց աշխարհի վրայ և «բանակեցան ընդէմ քաղաքին կոստանդինուպոլիսի ի քաղաքն, որ կոչի Խասոյպոլիս»: Այդտեղից թուզթ է գրում Լեւոն կայսեր լի սպասնալիքով, Ահանէս կամ Յոհանէս պատրիարքը սուրբ Գրքի օրինակներով խրախուսում է կայսեր և սա վայելուչ պատասխան է ուզզում արարներին: Ստանում է երկրորդ թուզթ, որին պատասխան չի դրում, այլ աղօթքով դիմում է առ Աստուած, իւր հետ ամրող ժողովուրդը: Թշնամունաւերը սկսում են յարձակումը, բայց Խաչի զօրութեամբ բարձրանում է սաստիկ փոթորիկ և ընկղմում բարոր նաւերը: Ահմատն ու Մալիմը նաւի բեկորի վրայ ազատուում են մի անմարդաբնակ կղզի որ կոչի Խորտաստան, յիսուն անձանց հետ, որոնցից ի ուսում են ապրելու համար: Լեւոնը ներում է նոցակեանքը և վերագարձնում բարտադ:

Դ. (գլ. Ի) ունի նոյն պատմութիւնը այսպիսի տարբերութիւններով. Արաբների պարտւած զօրքի թիւն էր Ծ. բիւր, խորտակւած նաւերից մի մասը փրկում է յաշխարհն Թրակացոց. զօրապետն է միայն Մալիմ և մի քանի աննշան մանրամասնութիւններ:

Այդպիսի մի յարձակման մասին պատմում է Սեբէոսը (գլ. ԼԶ, էջ 144—146): Յունաց կոստանդին կայսրը իւր տասնմէկերորդ

տարին իսմայէլի Մաւիաս իշխանից սպառնական թուզթ է ստանում ուրանալ իւր կրօնը և հնազանդիկել իրան:

Մաւիան նզիպտոսում պատրաստում է մնձ քանակութեամբ: Նաւեր և ցամաքային զօրքով գալիս հանուում Թաղկեղոն: Կոստանդինը եկիղեցում ազօթում է և պատրաստում զիմագրելու. սկսում է պատերազմը, ցամաքից և ծովից: Եյտիաւ հողմն, մրբիկ մնձ և զղբեցաւ ծովի ի ներքուստ անդընդոց...քակտեցան նաւքն և ընկղմեցան բազմութիւն զաւրացն ի խորս ծովուն... և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի:

Դ. ու Ծ. այդ պատմութեանը առասպելի կերպարանք են տեսել:

ԻԱ.

5.—Ծ. պատմում է. «Իսկ մին այլ տարին ժողով արար Ահմատ որդին Մահմետայ... յելանել աշխարհն Հայոց»: Նախարարները զիմում են Սահակ հայրապետին և սա համաձայնուում է զնալ և իշխնել արշաւող զօրապետի բարկութիւնը: Նրան ուղեկցում է Համազասպ ի տանէն Համակարին Խառան հասած մեռնում է Սահակը, Նախապէս թուզթ զրելով Ահմատին: Ահմատը լսելով այդ, անձամբ գնում է այցելութիւն չթաղւած կաթուզիկոսի գիտին. «և առեալ զաջն հայրապետին համրուրէր և սկսու իրաւու իրը ընդ կենդանւոյց»: Կարդում է նրա գրած թուզթը. հաւանում և ներումն շնորհում Հայաստանին, որը հկել էր աւետելու:

Այս Ահմատի վերջի արշաւանքն էր. մեռնում է Ամր Շիսկ Ահմատն այն ժամին էր ծերացեալ մեռաւ:

Դ. ի մէջ այս պատմութիւնը գրոձեալ նման է Ծ. ին. տարբերութիւնն է. Արգլմէլիքն է Մահմետին ուղարկում Հայաստանի զէմ, որին ընդառաջում է Սահակ Կաթուզիկոսը, որը Խառումնելով միանում է, միայն չթաղւած գալիս է Մահմետը: Գնում է «առ մարմնոյ ննջեցելոյն, ետ նմա ողջոյն ըստ սովորութեան իւրեանց ... և իրը ընդ կենդանւոյ ումէք խօսէր ... Չունի Համազասպի անունը»:

Յ. կաթուզիկոսը նոյն պատմութեան մէջ մտցրել է առապեկան մի նորութիւն, որ յետոյ կրկնում են Ասողիկը, կիրակոս Գանձակեցին և ուրիշներ, մինչդեռ վարդան պատմիչը հետեւէ է Դ. ին: Բայց Յ. կաթուզիկը տակաւին գտնուում էր Թամասկուում, երբ լսում է Ոգբայ (և ոչ Մահմետ) զօրավարի արշաւանքի մասին. Խառանում մեռնում է, նախապէս թուզթ զրելով: Այդ լսելով Ոգբան, պատւիրում է նրան չթաղել և իրը ինքը գալիս է

գիտակին այցելութեան, «իբրև կենդանւոյ ողջունէր զնա ի լեզու իւր սալամալք ասելով: Իսկ ապա Հոգւոյն աղղումն զծեռն որբոյն, որ անշնչութեամբն էր խափանեալ, շարժեաց լնդէմ սատիկանին ի պատճառս աղերսանաց» (Յ. Կ. Էջ 95—97):

իԲ.

6.—Հայուստանի վրայ իշխող է կարգում Թէոյդոս Ալշտունի ի տանէն Մանաձեղի. Պարսկաստանում թագաւորում է Հուրմիզապապար, որ յարձակում է Վասպուրականի վրայ, աւերում ձվաշ, Գերամ, Արտաշ, Հացիւ, Կոկովիտ, ամուրն Արծափաց: Թէոդորոսը վրայ է համում, Երասխի ափին ջարդում նոցա և աղատում գերիներին:

7.-ը (Գլ. Գ, Էջ 11—12) պատմում է տարբեր. Օթման և Ոգրան հն յարձակողները, որ համնելով Վասպուրական, «առին զաւանս և զամրցոս որ մինչև ի Նախջաւան քաղաք», ապա Տարօն, Կոկովիտ և Արծափաց ամրոցը: Թէոդորոս Ալշտունին Ռ. մարդով յարձակում է, կոսորում մինչև ԳՌ մարդ Սրան է հետեւ Ասոդիկը (Էջ 122):

Սերէսուը (Գլ. ԼԲ, ԼԹ Էջ 116—117) պատմում է այսպէս. Իսմայելացիք մտնում են Այրարատ, համում են Երեան. «և ոչ կարացին առնել», իսկ յաջողութեամբ առնում են Արծափարը: Հայոց զօրավարը վրայ է համում և թշնամու գրի մարդկանց համարեա բոլորին կոտորում:

իԳ.

7.—Թէոդորոս Ալշտունին Յունաստանից կանչում է Պատրիքութեան տիտղոս ստացած իւր Վարդ որդուն, նրան է յանձնում Հայուստանի Կառավարութիւնը և խորհուրդ տալիս, թողնել յոյշերի հետ բարեկամութիւնը և միանալ պարսիկներին, որ աւելի ուժեղ են և օգտակար իր երկրին: Պատրիկը զաղոնի վաշն է կապում պարսիկների հետ և խոստանում նոցա յանձնել յոյների զօրքը: Պարսիկ Հուրմիզայ թագաւորի որդի Սահակը առնում է Թէոդորոսին, Դիրչան, Եկեղեց. «Հասեալ ի Կոլանեայ բնակեցաւ յեզր գետոյն»: Յոյները Պատրիկից խարւած, անցնում են գետի կամուրջը. Պատրիկը քանդում է կամուրջը, թիկունքից յարձակում յոյների վրայ և պարսիկների հետ ջարդում ամբողջ բանակը:

Յետոյ նա իւր յանցանքի համապատասխան ծանր երազ է տեսնում և Սիմէռն ճգնաւորի խորհրդով Վասպուրականում շինում է 1000 եկեղեցի և ներումն ստանում:

7.-ը (Գլ. Գ, Էջ 13) պատմում է որ Հերակլի թռռ կոստանդին

կայսրը պատրաստում է յարձակւել արարների վրայ. թուղթ է գրում երկու անգամ Թէոդորոս Ալշտունուն՝ միացած Ամբատ Բագրատունու հետ, գալ օգնութեան, Թէոդորոսը երկիւղից համաձայնում է, բայց խորհուրդ է տալիս իւր Վարդ որդուն նհնդիկը յոյներին: Հօր Խրատին հետեւելով, Պատրիկը զիմում է յունաց զօրավար Թէոդորոսի որդուն և ասածարկում իրեն յանձնել Եփրամ գետի վրայ կառուցած նաւակամրջի պահպանութիւնը: Վասանգաւոր միջոցում կարում է կամրջի լարը և յոյներին պարտութեան մատնում:

7.-ը օգտաւում է Վարդանը, մի նախակառութեան մէջ ամփոփելով գէպքի յիշատակութիւնը (Էջ 68):

Կարեսը է Թ. Արծ. մի տեղեկութիւնը (Գլ. ԻԹ. Էջ 255). Գագիկ Արծրունի «Հինեաց զնադարլուր բարձրավանդակն ի Մահաշաշա գեօղ յակին գետոյն յելս կոյս, որ հայի յիստանն Ալշտունեաց, յորում տեղւոջն յառաջազոյն ապարանք պարսպաւորք եղեալ էր Վարդ Պատրիկ Ալշտունոյ յայկազնոյ»: 7.-ը վիրայեցալ պատմութեան մէջ զրում է, «Վարդ պատրիկ մահալ ի արգունիս իւր, որ մօտ էր ի ծովն Ալշտունեաց, որ կոչի Մահերաշայ»:

Որ Վարդ Պատրիկը բազմաթիւ եկեղեցիներ է շնել, յիշատակում է նաև Յոնան Մամիկոնեանը. «Իշխանն Արծրունեաց որում անուն կոչիւր Վարդ Պատրիկ. սա շնեաց բազում եկեղեցին և վանօրայս» (Տր. Վենետ. թ. 1889 Էջ 9):

իԴ.

8.—Ծ.-ը երկարօրէն պատմել է Տաճատ Անձեացու գործերը, բագարձակ առասպելի եղանակով: Սա առանց իմանալու սպանում է Բաղտատի Մահմատ թագաւորի որդիներից մէկին, երկիւղից վախչում է Յունաստան, պատերազմի մէջ մահւանից ազատում նոյն թագաւորի երկրորդ որդուն և իրրի վարձատրութիւնստանում իշխանութիւն Հայուստանի վրայ: Ստունի կոփների ժամանակ հայ իշխանները ծածուկ սպանում են նրան:

7.-ը (Գլ. ԼԵ, ԼԹ) միայն յիշատակութիւնն է անում, նման բայց ոչ նոյն մանրամասնութիւններով: Սա պատմում է, որ Տաճատը, «որդի Գրիգորի ի տանէ Անձեացի, վախսատական յիշխանէն Իսմայէլի առ կայսրն», իբ տարի հաւատարմութեամբ ծառայում է յոյներին և քաջազործութիւններ կատարում: Իսմայէլացոց Մահմետի որդի Անձրոն զօրավարը յոյների զէմ պատերազմում նեղն ընկած, երգմամբ ընդունում է Տաճատի առաջարկը՝ մոռանալ անցեալը և աղատուում է նրա ձեռնաւութեամբ Մահմետ տալիք՝ Տաճատին ի վերայ-

երկրին Հայոց։ Հայաստանի կուսակալ Օթմանը մի ամբողջ տո րի չի կատարում այդ հրամանը իշխանութիւնը Տաճատին յանձնելու, բայց երբ Մահմետն ու Ահարոնը ստիպում են նրան, համաձայնում է, բայց ամառնային շոգերին նրան ուղարկում է կոիւ, որտեղ Քերան գաշտի դժնդակ շոգերից մեռնում է։

Այս օրինակները ցոյց են տալիս. ա) Որ հայ պատմադիրներից և ոչ մէկը այն Զ-ից որ այժմ մեր ձեռքումն է, չի օգտուի։ Յ. Կ-ի Բուղայից նահատակւածների մասրամասնութիւնները և Ռւխտանէսի Դաւթի թագի պատմութիւնը մենք ընդունեցինք կորած լրիւ Զ-ի միջից։

բ) Որ Զ-ի բովանդակութիւնը կապ ունի միայն Ղ-ի պատմութեան հետ և այդ կապը շատ մօտ է ոչ միայն պատմական մասրամասնութիւններով, այլ միքանի գէպքերում նոյն իսկ բառացի կը կնութիւններով։

գ) Զեայած այդ ակներեւ նմանութիւններին, գծւար է ասել, որ Զ-ի հեղինակը, որ նոյն է Շ-ը, օգտուի է անմիջապէս Ղ-ի գըրւածքից, Շ-ը առաջ բերւած հաւատածներում ունի պատմական նկարագրութիւնների և յստուկ անունների մէջ այնպիսի փաստացի և անկախ տեղեկութիւններ, որ չեն բացատրում Ղ-ի պատմութիւնով։

դ) Ես ընդունում եմ, որ Շ-ը զիտէր և ծանօթ էր Ղ-ի պատմութեանը, բայց որ նա կարգացել էր նոյն նիւթերի մասին նաև այլ գրքեր, կամ աւելի հաւանական է բերանացի պատմւածքներ լսել և իւր գիրքը զրել է յիշողութեամբ և ոչ Ղ-ի գիրքը կամ այլ աղբիւր ուղանի վրայ զրած։ Վերոցիշեալ ութ հաւածի մէջ չկայ ուղղակի ընդօրինակութեան և ոչ մի փաստ։

ե) Ղ-ի պատմութեան յիշատակարանը ես հասկանում եմ այսպէս. «Կատարեցաւ վարդապետութիւն զիւնդի... ի հրամանէ Շապհոյ Բագրատունոյ», որ մեր ձեռքն է հասել Շ-ի արտազրեւ տւած Ղ-ի պատմութեան բնագրի ընդօրինակութիւնը։

իէ.

Հապուհի ձեռագիրը¹⁾ բերւած է Իմ անապատից և ամենայն հաւանականութեամբ արտագրւած է նաև նոյն անապատում, իջմիածնի մատենադարանում նրա համարն է 1371, զիրքը փոքր է, հասարակ կաշէկապմով. զրւած է երկու ահսակ թղթի վրայ,

1) Այդ 2-ի նկարագրութիւնը և Պատմութեան բովանդակութեան մասին մենք առջին յօւթեածները տպադրել ենք ու իջմիածնն Շարտթերթի, 1920 թ. հ-2 և Արտառ, 1919, էջ 40—53։

թղ. 1—85, փոքր հաստ զիգնագոյն և անհարթ, թղ. 86—195 քարակ և վայլուն թուղթ է, մեծութիւնն է 16—10 սանտիմետր, զրւած է միասին շղագրածն նօտրագրով։ Առաջին մասը թղթ, 1—85 ունի 21 տող, երկորդ մասը թղ. 86—193 16, կարմիր գծերով եղերւած։ Շապուհի պատմութիւնը առաջի մասի մէջն է և գրւած է աւելի հին գրչի ձեռքով։ թղ. 86—192 պարունակում է Արրանամ կրհասցու պատմութիւնը։

«Վիպատմանութիւն պատմութեան վասն գալստեան իմոյ ի ուր էջմիջին եւ վ'ս վլխ ճնի արբհման մւ ուրզն կթէ դկսին Բաղիշցեցւոյ զիտին տարօնոյ եւ վ'ս անցիցն և վշտակրութեն իմոյ եւ վ'ս գալստեն թահմալվանին ի կենած ի . . . եւ վ'ս պատերազմին եղելոյ ընդ օսմանցիս ի գշտն Եղուարդայ և ջրաւ նորին»։

Սրա բոլոր զլուխները զրւած են կարգով։ և լուսանցքներում ունի բազմաթիւ սրբագրութիւններ։ Այս օրինակը նման է Կալկաթայի 1796 թ. ապագրութեանը և ոչ իջմիածնի 1870 թ.։

Մեկ համար կարեորն է Ա. մասը։ Զ-ը պահւած է բաւական ողարմելի զիտակում, զրւած է անվարժ զրչի ձեռքով և կրկին կտղմելու ժամանակ թերթերը այնպէս են խանւել, որ առանձին աշխատանք էր հարկաւոր սկզբնականը վերականգնելու։ Սկզբից թղ. 1—10 վերկի անկիւնները փթել են, որի հետեանքով 1—4 թերթերի բնագիրը պահած մասեր ունի. կրկին կազմողը կապիտի կերպով կարկատել է թերբն։ Թրութեան և տողերի մէջ միատեսակութիւն չկայ, ընդհանրապէս 21 է, բայց պատահում է և 24 տող։ Ունի չըրւած երեսներ, թէն բնագիրը առերկոյթ անթերի է Այզպէս են թղ. 29ա-ի կէսը, 29բ, 46ա—մինչև 48բ (47բ-ի վրայ կայ 8 տող զրչափորձութիւն)։

Կազմելիս խառնւած թերթերը ի յայտ է բերել Գալուստը, դասաւորելով և արտազրելով այսպէս. թղ. 64, 72, 73, 76—86, 74, 75, 65—71, Միայն մի տեղ է կազմողը նկատել շփոթութիւնը և ստորլուսանցքեան ծանօթութիւնով շտկել (թղ. 73բ. «երկու թուղթ անցիր և ապա ընթերցիր զայս նշան»)։

Բնագիրն սկսում է այսպէս. | հալ ջանս մումեղին | կաւագունս իւր մի | և եկեալ ի տեղին ուր էր | և շուրջ զնովաւ արեալ մեծ | այձայն. բարբառէին և անկ... վնրչանում է. | տանէն զանդեւան. և նայ բազ | ում ամրոցն ի թափեցւանում | ... (Տիս թղ. 71ը և ոչ 85ը). Վերջի երեսի գիտեց ան | ... (Տիս թղ. 71ը և ոչ 85ը). Վերջի երեսի գիտացի թերթը պատմւած է. (Ստորին լուսանցքում գրւած են տետրերի առանամարներ. Զ (թղ. 9ա), Բ (թղ. 11ա), Է (թղ. 19ա), Գ (25ա), Դ (30ա), Ե (44ա), Զ (49ա), ԺԱ (58ա), Է (65ա),

Հ 72ա), Ժ. 85բ): Այսպէս անկանոն և անհամաչափ գրւածտերանշանների արժէքը իսկապէս անհասկանալի է: Եթէ ունին մի բացատրութիւն, այդ այն է, որ չին օրինակի մէջ եղել են այդ տառահամարները և արտագրուղը ձախ ու ծուռ, անուշագիր կերպով արտագրել է ինչ որ տեսիլ է: Բնագիրը հաւանական չին էր, որի նշաններիցն է աւ-ի գործածութիւնը փոխանակ օ-ի Գուել նրա մէջ պակաս էին նաև որոշ էջեր և արտագրիչը, լրացնելու յուսով՝ չգրւած երեսներ է թողել իւր օրինակի մէջ:

Արտագրութիւնը կատարւած է վերին աստիճանի անխնամ և անհասկացած ձեռվ. ակնյայտնի տառասիալներ, նոյն բառի մի քանի ուղղագրութեամբ արտագրութիւններ, նոյն յատուկ անունը, նոյն երեսում շատ անգամ, ամենատարբեր ձեռվ ուղղագրւած չհասկացւած բառեր, անթիւ բացեր և թերութիւններ՝ բառերի ու անշուշտ նաև հաւանածների: Բոլորն աշխատել ենք անփոփոխ վերարտագրել շղագրով ցոյց տալով սխալը, վակագծի մէջ առնելով մեր զգուշաւոր սրբագրութիւնը և ծանօթութիւնների մէջ առնելով կատարւած որևէ փոփոխութիւն: Չ Ուկեփորիկ մի օրինակի և Արտարտի տպագրութեան բաղկատութիւնները շատ անգամ օգնում են բնագիրը պարզաբանելու և հասկանալու:

Արտագրովի այդքան կոտիր սխալները բացատրում են անշուշտ ամենից առաջ իր տպիտութեամբ, տպա հին Զ.-ի աղաւագւած և եղծւած վիճակով:

Արտագրութեան ժամանակը շատ նոր է, Ժէ—ԺԹ գարինչապէս ցոյց են տալիս շղագրին մօտ նոտրագիրը և թուղթը Զ.-ի երկրորդ մասն էլ թէև դարձեալ յիշատակարան չունի, բայց վերջում պահած է թւականով մի գրութիւն, որ Արտահամ Կրետացու ընդօրինակող ձեռքով է գրւած: Այդ գրութիւնն է.

Թղ. 195բ.—«Եղի յայտնիլ ս՝ բյ նշանին որ ի վարագ ս՝ բյ նշանի յետեղեցոյ շինման: 1264 մյամի շաբաթ աւուր որ կիւրատին էր տօն երեման ս՝ բյ խաչին: և այս ս՝ բյ նշանս ոչ թէ ուռաջին որ աւաք ս՝ բյ նշան ասի և տօն կատարի անուն ն՝ բյ վարագայ խաչի այլ յետին ժամանակիս յայտնի ս՝ բյ նշանս որ ըստ կարծեաց գետարդեն է, բայց յետոյ ստուգեցուք»¹⁾:

Այս տեղեկութեան հիման վրայ, եթէ Արտահամի մասը գրւել է 1815 թ. մի փոքր առաջ, Ն.-ի մասը կարող ենք տանել Ժէ դարը, ոչ աւելի հետու: Գ. Տ.-Մ. Ժէ գարն է ընդունում:

Ի՞Զ.

Գ. Տէլ Մկրտչեանը արտագրել է Զ.-ի միայն մի մասը, սկսած թղ. 34ր: «Եւ կացեալ Պատրիկն ամս Զ և վախճանեցաւ», մի կողմ թողնելով սկիզբը: Զ.-ը այդպիսի բաժանման ոչ մի կուան չի տալիս: Երա մէջ կան միայն երկու զլուկի՝ կարմրով գրւած, թղ. 2ա.—«Պատմութիւն յաղագս Մուրիկայ, թա՝ զին հոռոմոց», և թղ. 4ր: «Պատմութիւն հերակլեսի թագաւորի յունաց»: Իսկ որտեղից Գ. Տ.-Մ.-ն է ոկան իւր արտագրութիւնը, բաժանման ոչ մի նշան չկայ: Թղ. 34ա. գրւած է, —«Եւ էր թվականն հայոց (թղ. 34ա). բճ և կացեալ պատրիկն ...»:

Գ. Տ.-Մ.-ը հիւանդութեան ծանր օրերն էր ապրում, երեսուն տարի ոտների գործածութիւնից զրկւած, անդամալոյժ վիճակում վերջին երեք տարին անկողնից գուրս գալ և նստել անգամ չէր կարողանում: Իւր ծանը հիւանդութեան բոլոր մանրամասնութիւնները բժշկից աւելի ինքն էր հմտութիւնից ուսումնասիրել, զիսակցում էր նքա յառաջիւաղացման հանգամանքները և հաւանօրէն զգում էր, որ անկարող էր լինելու սկսածը վերջացնել: Եա զիսէր, որ Զ.-ի տռաջի մասը, չսշին բացառութեամբ, բանասէրներին արդէն ծանօթ է, քանի որ հացունեաց Խաչի Պատմութեան անւան տակ գտնում էր ձառընտիւների մէջ, մի մասը տպագրւած էր Արտարատ ամսաթերթում, և. Մ. Չամչեանը իւր պատմութեան մէջ օգտագործել էր և բաւական յաճախ արտագրւած է հին Զ.-ում:

Ահա այդ պատճառով նա թողնում է Զ.-ի առաջի մասը, արտագրում և ուսումնասիրում է միայն երկրորդը, որ մինչեւ այդ ժամանակ անյայտ էր և պատմական հնտաքրքիր բովանդակութեամբ լիցուն:

Գ. Տ.-Մ.-ը արտագրութիւնը կատարել է հասարակ մատիտով, ամբողջը բաժանել 132 հատածների և իւր սրբագրութիւններն ու ծանօթութիւնները նշանակել է լուսանցներում: Արտագրութեան վերջի 59 երորդ թերթի վերայ զողացող ձեռքով զբել է.

«Եյստեղ վերջանում է Սմբատ Բագրատունու (մի բառ չի կարդացւում) ընդամենը 555 էջ (?)»: Նոյնը կը կնւած է 60-րդ թերթի վրայ: —«Եյստեղ վերջանում է Սմբատ Բագրատունու առաջին մասի պատմութիւնը, որ հիմնած...» Զերը զողացել է և շարունակութիւն չկայ:

Թղ. 61 տալիս է Զ.-ի նշարագրութիւնը:

—(Հ. 1371 փոքրադիր, կաշէկաղմ. կազմի մհծութիւնը մօտաւորապէս 15—10 սանտ. թուղթ, էջ 1—85 հացունեաց խաչի նորագիւտ խմբագրութիւնը իւր տարան սկրոքեամբ: Հին գործարա-

1) Եյս գրութիւնը գրիպել է Գ. Տ.-ի ուշագրսթիւնից:

նային թուղթ, ջրանիշներով. տարբեր գրիչներից. նօտր շղաղիր. անյիշատակարան, հաւանօքէն 17-րդ դարու գործ էջ 86—193 տեղի նոր գրութիւն, նորագոյն թղթի վրայ. պատահարար մտած է նոյն կազմի մէջ, առանց հեղինակի անուան, Պատմութիւն Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոց, առագր. էջմիածին 1870 թ. Զկայ որևէ յիշատակարան: Լիմ անապատի կնիքը էջ 1.: Բերւած է Զ-ը Վասպուրականից:

Նարունակութեան մէջ Գ. Տ. Մ.-ը տալիս է էջմիածին բերւած հ. 646 Ասկեփորիկ—Ճառընտրի համառօտ նկարագրութիւնը, որի մէջ գտնւում է Հացունաց Խաչի Պատմութիւնը:

Յանկանալով հարազարաւթեամբ վերաբաղրել ականաւոր գիտնակ ան Դալուստ Օեր-Մկրտչեանի վերջի գրաւոր աշխատութիւնը, նրա մէջ որևէ փոփոխութիւն չհնք մտցնում. նոյն իսկ ի վեա ընագրի ամբողջութեանը: Մենք պահպանում ենք նրա բաժանմունքները. 1—132 սկսում ենք նոր էջից և լուսանցի ծանօթութիւների վրայ շատ քիչ բան ենք աւելացնում:

Մենք արտագրել ենք առաջի մասը. թղ. 1ա. — 34. Նոյնպէս բաժանել ենք հաւածների, միայն աւելի խոշոր, ամբողջը բաղդատել ենք էջմիածինի 1888 թ. Արաբատ ամսագրի մէջ առաջբրւած Հացունաց Խաչի պատմութեան և Մովսէս Երգնկացու ձեռքով կազմւած Ասկեփորիկ Ճառընտրի բնագրերի հետ Բաղդատութիւնը ցոյց տեհց, որ սկզբնական բնագրից փոխ առած հաւածները Ճառընտիր և Ասկեփորիկ կազմողները խոշոր փոփոխութեան են հնթարկել. աւելի յարմարացնելով վարքագրական ձերին և իրենց հասկացածի պէս են սրբագրել նաև սկզբնատիպի լեզուն:

Զ-ի սրբադրութեանը օգնել է Եր. Տէր Մինսոսեանը, որի հետ բաղդատել ենք բնագրերը, իսկ իմ հիւանդութեան պատճառով վերջի մէկ ու կէս մամուլը միայն նա է սրբագրել:

Տպագրական մի քանի ուղղելիքներ առանձնապէս չենք նշանակում:

Մայիս, 1921 թ.

Սեպով Եպիսկոպոս.

1. (1ա)---(լուց) | եալ ջահս մոմեղէ | ն (սար) | կատագունս իւր մի-- | և եկեալ ի տեղին ուր էր---- | և շուրջ գնովառ տրեալ մեծ | այծայն բարբառէին և անկ | արծակի գարգեան արք վաճ | այսկանք դարհուրեցան: 3
Եւ յա | րուցեալ գնացին առ նայ և առ | են ցմինովն. «Զինչ է որ լոեմք, Նես | տոր Սարգիս, զառնէս զայսմանէ»: Եւ ասէ. «տեսիլ երկնից տես(ի) | ի վերայ սորայ և լոյս մեծ և հրեշտ | ակք, որ ասէին թէ մարգարէ | սա մեծ և զոր ինչ ասէ գայ, | ճշմարիս են բանք 40 դորայ»:

Եւ ապայ զմառաւ եկեալ արքն | վաճարականք. «արդ գար էին բանք դորայ, | զոր ասէր մեզ, յորժամ զայք ի ճանապարհին»: | Եւ յարուցեալ գնացի(ն) զճանապարհ իւրեանց: | Եւ յորժամ զար(1թ)(Ճան յաշխա)րհն 55 իւրեանց և գնացին (իւրաք)անչիւր ի տունս և այս

4. Փոխ. տեսալ- 8, 2. տես ի վեր. 44. 2. դնայի.


1. Թերթ 1—6 անկիւնները մաշւած են ու կարկատւած, որով պակաս են բասիրի մասեր. թղ 1^ա լուսանցում նորագոյն շղագրով «Բարողգիրք» և անկիւնում կնիք Լիմ անապատի: Սկիզբը թերթի է:

7. Թ. Արծրունի (գլ. Բ էջ 99—101 Պարբ.) պատմում է նեստորական Սարգիս Բնիքրայ մոնակոնի հանգիպումը իրրե վաճառական եպիպոս եկած Մահմետի հետ, որը տեսիլներ էր սկսնում: Տես Վարդան, էջ 63. (Վենետ). Մի. Անեցի, էջ 36 (Պիտիրք.), Կիր. Գանձ. էջ 55 (Հրատ. Պուկ.). Մ. Կաղակ. էջ 6 (Պարիզ): Ա. Մյոլլեր, Իсторія Іслама, СПБ. 1895, էջ 51 Բիթրայի պատմութիւնը համարում է առասպեկտ:

11. Սկզբում մի էջ տալիս եմ բնագրի տողերի չափը՝ որոշեած ուղիղ գծերով:

առաջք երթալոյ հետ ճանապարհին Մահմէտայ:
 2. Եւ լուսաւ զայս Ճապասպ Քասրէ արքայն Պարսից
 և խնդրէր սպանանել զՄահմէտ և ասէր թէ. «Նոյ
 ուսեալ էր հերձուածս Ասորեստաննեաց և կամի խարանել
 զ զպաշտօն կոոց մերոց»: Եւ յարուցեալ Մահմէտ և Ալի,
 առեալ զՁատմայ, ելին աշխարհէն խրեանց ի Պարսից
 և եկեալ բնակեցան աշխարհն Բաբելացոց: Եւ էր սկիզբն
 թվականին հայոց. 19:

3. Եւ արար Մահմէտ սկիզբն շինել զՊաղտագ քա-
 40 զաք մեծ առ եզր գետոյն երքատայ: Եւ եղի հակարա-
 կութիւն ի մէջ Ալի և Մահմէտ(այ): Եւ կալեալ զմի կողմն
 գետոյն Ալի(2ա), և զմիւսն Մահմէտ, (----- պատ)՝
 երազմ ընդ Ալի և ըն(դ Մահմէտ). զի ոչ էթող զպաշ-
 տօ(ն մարգ(--)թեան զոր ուներ Ալի: Եւ խորհէր ըսպա-
 45 նանել զՄահմէտ. և ոչ կարէր. զի քոյր նորա Ֆատմա
 — կինն էր առ Ալի և նա ոչ տայր սպանանել զՄահմէտ:



3. 2. Ճապաս քարոչ: 4. Փոխ. Խափանել. 14. 2. դօր: 16. 2. ալ-

8. Մամ. Անեցի (էջ 88). «Ոմանք ի պատմագրացն գելն Մահ-
 մէտի ի կե թ. առեն, և այլք ի կը և այլք ի կը»: Պատմական թւա-
 կանն է 611, մինչ այստեղ 587 է. իսկ Մահմէտի ծննդեան թիւն
 է 570 մօտաւորապէս:

14. օ և առ գրութիւնը միշտ պահպանում եմ անվոփիոխ. հա-
 մեմատ Զ-ի:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ՄՈՒՐԻԿԱՅ ԹԱԳԱԽՈՐԻՆ ՀՈՌՈՄՈՑ.

4. Յետ այսորիկ մեռաւ Մուրիկ արքայն Հրոմոց: Եւ
 նայ էր արեալ Զաքըն քուրն Գասրէին՝ արքային Պար-
 սից: Եւ եղեւ սպանումն Մուրիկայ այսպէս: Զի յորժամ 5
 թագաւորեաց Մուրիկ ի Կոստանտինուպոլիս առաքեաց
 զմի ոմն աշխարհն իւր ի Հայք, ի քաղաքն Անի: Եւ նայ
 էր պարտիզպան: Եւ եկն այրն Հրոմայեցի և եփիտ
 դԴաւիդ զհայրն Մուրիկայ: Եւ կռչել զնայ առ ինքն՝ ասէ
 ցնա. «կոչէ (2 բ) զքեղ որդին քո Մուրիկ, քանզի թա-
 գաւորեաց Հոռոմոց»: Իբրև լուաւ Դաւիթ, հայր Մուր-
 իկայ, ծիծաղեցաւ և ասէ. «ոչ կարեմ զալ. լաւ համարիմ Վ-
 զսակաւ պահէզս իմ քան զթագաւորութիւն Հոռոմոց,
 քանզի ով տայր թագաւորել մարդոյ աւտարականին»:

Եւ բերեալ հաց եղ առաջի նորա և ինքն էմուտ 15
 ի պարտէզն իւր և սկսաւ զմեծայմեծ բանձառս տակցի
 խլել. և առեալ զմանտարն տունկ արկանել ի տեղի
 մեծայմեծացն: Եւ զայն տեսեալ այրն Հրոմայեցի ասէ.

1. 2. թագին. 4. 2. փոխ. առեալ. 4. փոխ. «Քասրէին», որ այս
 2.ի մէջ սովորական է Խոսրովի փոխարէն:

1. Գրած է կարմրով, իբրև վերնագիր:
 4. Յետոյ պատահում է Զափրան, տղամարդու անուն:
 7. Պակաս է. «առ հայրն իւր», ինչպէս երեսմ է մտքիցը:
 9. Կիր. Գանձակիցի: 46. «Զսա (Մօրիկ) ասեն ի Հայոց, յօ-
 շական գեղջէ. և այլք թէ ի Տարօնոյ .. կէսք ասեն զսա յնքփուս
 գեղջէ կապագոկացւոց»: Ասողիկ, (141), յիշում է ասցւածքը.
 «Աստի յ Յշական խունկ առաջի»:
 18. Կիր. Գանձ. 47. «զմեծամեծ կաղամբան որ ի պարտիզին
 անդ, արմատախիլ առնել, կտրել զգլուխն, և զմանունսն փայփա-
 յիլ»:

«զի՞նչ գործես զայդ»: Եւ նայ ասէ, «այսպէս արժան է լինել»:

Եւ յորժամ դարձաւ այրն և եկն առ արքայն Մուրիկ, եւ ոչ երեր զհայրն նորայ: Եւ պատմեաց առաջի 5 արքային զոր առնէր հայր նորա: Եւ ապայ (3ա) ի միտսեկեալ արքայն (Մուրիկ) և ասէ թէ «զայն վասն մեծ (ամեծ) ացն իմոց խրատ ետ ինձ»: Եւ կալաւ զամենայն մեծքն Յունաց աշխարհին, զոմանս ի ծով լնկղմեց և զոմանս արելեաց աքսորս, և փոքրգուն 10 արանցն ետ պատիւ պատրկութեան և զօրավարութեան, և կարգեաց զաւրք սամկաց և զաւրավարաց: Եւ հաստատեցաւ թագաւորութիւն նորա ուժ:

5. Եւ եկեալ զամենայն աշխարհն Հոռոմոց և դարձեալ ի կողմանս հարաւ (ոյ) և բոնայբար կալաւ զեղիպտոս, և եկեալ յԵրուսաղէմ, և ածեալ պարիսպ շուրջանակի և պատեց և շինեց զեկեղեցիքն, զոր աւելեալ էր անօրէն կայսրն Հոռոմոց վաղէս. և ձեւաց զձեռն իւր արեւելք, և բուամբ էած զաշխարհն Հայոց, (3ը) Աղվանից և Ափխազաց (---) բոնացաւ ի վերայ յարեւելից և յարեւմտից, և հարաւոյ:

Եւ զՄախազ ոմն ի յաշխարհէն Հայոց կացոյց ի յարեւելս, այր չար և անաւրէն: Նայ շինեալ զամբոցն արարն Խորիսն գետոյ և կոչեաց զնայ Մախազիբերդ: Եւ

7. 2. իմօց կրկնած: 9. փոխ. արգելեաց: 13. փոխ. կալեալ.
14. 2. հարաւ. 16. 2. պատվեց. 22. 2. ոյմն: 23. փոխ. առ ափն.

13. Շարունակութիւնը ընդօրինակւած է Երդնկացու Ոսկեփորիկ Ժողվածուներում և ճառընտիրներում: Ճառընտրից արտատրպաւած է Արարատ, 1888, էջ 399—401. «Պատմութիւն ս՝ք, խաչին ու Հացունեացն կոչի: Կոշանակինք աչքի ընկնող տարրերութիւնները»:

19. Ոսկեփ. «Պաշխարհն Լազկաց որ ևս Ափխազք»: Արար. «Եղիպատոսի և Միջազգետաց, Ասորւոց և Հայոց, Վրաց և Ափխազաց»:

22. Արար. «շինեաց և զամուրն Անի առ ափն Ախուրեան գետոյ»:

արհասարակ խաղաղացոյց զերկիքն ամենայն, զոր ոմանք յառակա արկեալ ասեն, թէ «զինչ ի ժամանակին Մուրիկեա որ նստել է անհոգս»:

6. Եւ կալաւ զթագաւորութիւն Հոռոմոց ամս. իԶ.: Եւ հարկիւ ածեալ զՔասրէ զարքայն Պարսից, և առ զքոյր նորա ի կնութեան, և բերեալ զնայ ի Կոստանդինուլուղիս: Եւ ծնաւ որդիս երիս և դուստր մի:

Եւ ետ այսորիկ էր այր մի յաքսորս ի կղզի մի, որ ընդգէմ կար (4ա) ամայ է, յզարկեաց ն(--) զողի ի կոստանդինուղիս (: Եւ) միայբանեցոյց զմարդիկ ի զբան արկունի և սպանին զարքայն Մուրիկ ի սեղանն ի ժամ ճաշոյն: Եւ յզարկեցին հանին զչերակլէս և թագաւորեցուցին զնայ. և նայ զորդիսն Մուրիկայ առեալ սպանէր: Եւ կինն Մուրիկայ ելեալ զնայր ի յաշխարհն Պարսից առ Քասրէ . . . :

1. փոխ. առհասարակ: 1. 2. Խաղացոյց: 3. 2. Մուրիկս: 8. 2. Փոխ. յետ:

3. Առաքել Դաւրիթեցի. գլ. Դ. էջ 47, Արարատ, 399:

9. Ոսկեփ. «Որ հանդէպ մասաց», Արար. «Եւ զմի ոմն յիշխանաց յունաց՝ Հերակլ անուն ընկեցեալ էր յաքսորս Մուրիկ արքայն և էր ի կղզւոյն, որ հանդէպ է կամասայ: Արար. «առաքեաց գաղտագողի»:

15. Հմտ. Սերէսո, գլ. իԱ., թ. Ալծրունի, գլ. 9, Վարդան, էջ 60 (Վենետ). Վի. Այրիվանեցի, էջ 290 (Մոսկվա), Յոհ. կաթողիկոս էջ 73 (Հրատ. Ղուկ.) 3. Ս. Անեցի էջ 71. Կիր. Գանձ. էջ 50. Յոհ. կաթ. էջ 73 (Ղուկ. Հրատ.), Կրումբախեր Պատմ. Բիւղ. կայսրների (իմ թարգմ. էջ 108) Մօրիկին յաշնորդում է Փոկասը: Նոյն է Զուանչէր (էջ 95—96) որ Քասրէ է զործածում փոխան. Խոսրովի: Նոյնպէս Քասրէ ձեն ունի Վրաց տարեգրութիւնը, հրատ. M. Brössel. I. էջ 165.

15. Զ ակների թերի է, թէի Զ-ի արտագրութեան մէջ թերի լինելու ոչ մի նշան չկայ: Օրինակ ծառայող ընազիքն անշուշտ արդէն թերի էր: Ոսկէփորիկի և Ճառընտրի մէջ կայ թերի մասը — «Եւ կինն Մօրկայ ելեալ զնաց առ Խոսրով եղբայրն իւր և պատմեացն անցմն աղէտիցն զոր արարին Հոռոմբ: Իսկ Խոսրով արքայ վրէժինսդիր եղեւ արեւանն Մօրկայ, և առաքեաց զԽոռիան զօրաց վարն իւր բաղում զօրօք և փղօք յաշխարհն յունաց. և աւելեաց զա-

և զպախողող արարեալ և բազում գերիս
վարեալ ի աշխարհն Պարսից: Եւ հկեալ ի նմին այլ տա-
րին զնոյն կատարեաց աշխարհն յունաց և դարձաւ: Եւ
յէտ Զ տարուն եկն եւ նոյնպէս արար եւ անապատ
արար գերկիրն Յունաց ի մարդոյ և ի յանամոյ, զի ոչ
զըտան կերք մարդոյ: Եւ անամոյ:

(4բ:) (ՊԱՏՄ) ՈՒԹԻՒՆ ՀԵՐԱԿԼԵՍԻ ԹԱԳԱԼՈՒԻ ՅՈՒՆԱՅ.

7. (Եւ) ապայ Հեռակլ արքայն (Յուն) աց միաբանեաց
դամենայն յերկիրն Փրանկաց, Յունաց և Հայոց մեծաց
և Ավիտազաց և ճանապարհ արարեալ ի յարեւելք և
եկն էնաս ի թէոդոյպաւելիս, որ է Կարնոյ քաղաք, եւ
աեսեալ զքաղաքն ի հիմանէ քակեալ, եւ կամեցաւ շիներ
զնայ: Եւ տարակուսեալ էր վասն խաչին Քրիստոսի,
զի ոչ զիաէր թէ ուր գացէ զնայ: Եւ մատեաւ առնայ
այլ ոմն (ի) նախարարացն, որում անուն էր Կոստանդին
և ասէ. «թէ կամիս, արքայ, ես տեղակացեալ զտանեմ
զիաչն Քրիստոսի»: Եւ ասէ արքայն Հերակլ.—«եթէ
հնար է ջանա զոր ասես»:

2. 2. վառեալ: 3. փսխ. աշխարհին: 6. 2. վերը, երկաթաղիք 2-ի
դ և առերի փոփոխութեամբ է բացառում: 18 2. չանայ:
մենայն աշխարհն Հոռոմոց, և ջանաց մտանել ի քաղաքն գերապանծ
կոստանդինուպօլիս և ոչ կարաց, զի ընդգէմ էր ծովու Բայց գար-
ձաւ ի յունաց ի յԱսորեստան ի Շամատունն և ի Պաղէստինէ և
մտեալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ աւելեաց և տապալեաց
ի հիմանէ, վեպիսկոպոս և զքահանայս որով կոսորեաց և զամենայն
քաղաքն ի սուրբ մաշեաց: Եւ առեալ զիաչն տէքունական և զայլ
աստուածընկալ որբութիւնս եկեղեցեացն, և այլ բազում՝ մար-
գարանակ՝ մանկանց և կանանց և տարբաւ յաշխարհն Պարսից: Եւ
դարձեալ ի զալ տարբոյն զնոյն արար»:

Տես Սովերը Զ, 89—90 Պատմ. Ներս. և Ծերուկ. Պրичтъ Вардана, Ա. էջ 62:

7. Երկորդ վերնագիրը նոյնպէս կարմրով՝ վերստին կազմե-
լիս, կիսով չափ վերեի ծայրերից կտրւած է:

8. Ոսկէփ. և Արար. «Եւ միաբանեաց զգօրս աշխարհին Յունաց
և Հայոց և զԱմփիսազաց» չունի «Յրանկաց», որ անշուշտ նորա-
գոյն յաւելուած է:

8. Եւ ապայ կազմեաց այլն զջորիս և գանձս
բազումս և հանգերձս պատուականս և գնացեալ ենաս
յաշխարհն Պարսից, ի քաղ(5ա)աքն Գանձակ և ի Շահաս-
(տահն), որ Ռոկի քաղաքն կոչեն, որ է Թաւրէժ: Լիան
քաղաքացիքն և ասեն. «Քարի եղի մեղ աւուրս այս
միկ, զի զոր ինչ ցանկալի էր սրախց և աշաց մերոց,
գտանի առվաճառականս այս Հոռմայեցիւ: Լւսւ և ար-
քայն Բասրէ և կոչեաց զայրն վաճարական, հարցաւ
ցնայ և ասէ. «որմէ աշխարհէ ես»: Եւ նայ ասէ. «աշ-
խարհէն Յունաց»: Եւ ասէ արքայն. «ունիս վաճարս 40
պիտանիի»: Եւ նայ ասէ. «այս, արքայ, և ոյժ պիտա-
նի, ունիմ հանգերձս պայծառս և անաւթս ոսկեղինս
ընդ իս և ականս պատուականս»: Եւ բերեալ եղ ասանի
արքային: Եւ հաճեցաւ արքայն: Եւ առեալ ի հանգեր-
ձիցն և ոսկոյ անաւթիցն (5բ), (կ) պատուական 45
ականցն. և տվեալ զգինն վաճառին իւրոյ, որչափ և
ուզէր:

9. Եւ ել համբաւ վաճառականին ընդ ամենայն քա-
ղաքն և ցանկութեամբ գային ամէնէքեան ի վաճարա-
կանն և նայ ջանայր և հնար(էր) գտանել զտեզի սուրբ
նշանին Քրիստոսի, վասնզի այն էր պատճառն զալոյն

2. Զ. Արար. «հանգերձս պայծառս և ականս պատուականս»:

4. Այս Գանձակն է «Գանձակ Ատրպատականի», որ յաճախ
յիշատակում է Փ. Բիւզանդը. (ասհմանտպահք թաղաւորին Հայոց
որ նստին ի Գանձակ Ատրպատականի) էջ 141, տես նաև էջ 191,
202, 205, 241 եկն, ըստ Նորդիկէի (Tabari, թ. 100) գտնում էր
Աւրմիա լճի հարաւ արեւելքում, Մարազալի և Զենջանի միջում
Թափարի Առլիմանի աւելերկների տեղում, որ Սասանեանների օրով
կարեու կրօնական կենտրոն էր (Հմեն. Ն. Արտաց, Հայաստանը
Յոյնացըրած է Թաւրէժի հետ:

4. Ռոկ. Արար. «ուր ոսկերարն գործի»: Ն. Մառ 30. «ոսկե-
կարն» (Տ. թ. IX. էջ 50):

4. Ռոկ. Արար. «և ստուգարանի զա է զրէժ»:

7. Արար. «Գիւտ է Հոռմոց»:

իւրոյ ի Պարսիկս, զի պատուական բայտ խաչին գտանիցէ թէ ուր է: Եւ էր այլ մի պատուական ի գրան արքային Քառելի և բարեկամ թագաւորին: Եւ նայ եկեալ առ այրն Հրոմայեցի վաճարականն և գնեաց ի նմանէ հանդերձս պայծառ և տկանս պատուականու, և անօթս ոսկոյ: Նայ իմացաւ զայրն բարեմտութիւն և եղենմա (6ա) սիրելի և բարեկամ և տվեալ հանդերձս սոկէթէլս և ոսկեղէն անօթս և պատուական ականս: Եւ եղէն սիրելիք իրերացս: Եւ երթայր երեւելի այրն առ վաճարականն Հրոմայեցի և աւուր միոււմ ասէ ցնայ, «այս բազում աւուրք են, զի ես՝ առքեզ յամ, եկ և դու ժամ մի ի տուն իմ. զի արարից քեզ փոխարէն բազում ծախուց քոց»: «Գամ օժար կամօք»:

Եւ եղե աւուր միոււմ առակեաց զծառայս իւր կոչել զվաճառականն ի տուն իւր. և զայ: Կաղմեաց նմա պայծառ բազմակամիք և ճաշ զանազան պիտոյիւր: Եւ նայ առեալ զնաց միայն ճաշակէր: Հարցաւ ցնայ այրն Պարսիկ. «զիարդ ոչ ուտեսո»: Եւ նայ ասէ. «այս .Գ. ամք են զի ոչ եմուտ ի բերանն (6բ) (իմ մ)իս կամ այլ փառ փուկ կերպայկուր»: Եւ ասէ այրն Պարսիկ. «ընդէր և կամ զինչ է որ չուտեսո»: Ասէ վաճարականն Հրոմայեցին. «զի ուխտ կալեալ եմ ես մինչե յերկիրպագանից միոււմ փայտին սրբոյ զոր գերեցին զօրքն Պարսից ի քաղաքէն Երուսաղէմէ, և ապայ ճաշակեմ միս կամ այլ փարուկ կերակուր: Լուր ինձ որ տսեմ քեզ, թէ հնար

1. Փոխ. փալտ. 6. 2. զառնն: 9. 2. երիբացս: 11. փոխ զամ: 43. Արար, ծտխաց, 43. փոխ յօժար: 45. 2. զաց: 16. Արար, «և գինի անուշահմա»: 23. 2. զօր զբեցին: 24. 2. կմէ. 25. փուկ 25. Արար. «և այլ ուտեսոց կերպուրն».

2. Բատ Սերէոսի (Էջ 99) Խաչափայտը Հերակլ կայսրին վերագարձրել է Խոռիսմ զօրավարը և փոխարէնը ընդունել Պարսից թագաւորի թագը: Տես նաև Յովհաթ. էջ 76. Ասողիկ 117, Թ. Արմծ. գլ. 9, էջ 96—97 և Պ. Ն. Մատի էջմիածնի ձառընտրից տպած «Յաղագս սրբոյ խաչին ի Հերակլա պատութեանց» (Տ. Պ. IX. 52—59):

էր, բերէիր առ քեզ զնշան փայտին»: «Բայց չէ հնար ումեթէ ձեռնայիտս լինել այն տեղին, որում կայ խաչայփայտն ձեռ, վասնզի տեղին այն սենէկ է թագաւորին մեռոյ Քառելի, այլ թէ կամիս տարայց զքեզ մօտ և առ տանն որում կանչան խաչին»: Եւ նորայ շնորհայդ կտլ եղե նմա:

յԱրուցեալ երկոքինն եկին ապարանս արքային Պարսից և ցուցեալ (7ա) զտունն ասէ. «աստանաւը կ(այ) փայտ խաչին ձեռոյ»: Եւ նայ անկեալ երկիրպագանէր առաջի տանն: Եւ գնացին իջեւանս իւրեանց: Եւ նա 40 փութապէս յզարկեաց արքային Հերակլեայ:

10. Եւ էր թագաւորն Հերակլէս բնակեալ ի քաղաքն Կարնոյ և սկիզբն արարեալ շինութեան պարսպին զոր քանդեաց Խորիսն զաւրապարն Պարսից:

Եւ հասաւ այրն առաքեալ ի վաճարականէն ար արքայն Հերակլ: Եւ նայ միայբանեցոյց զաւրքն Հայոց եւ զվրաց եւ զԱզուանից, զՄիջագետաց եւ Յունաց եւ զԹուանկաց եւ առաջ ել գնաց երկիրն Վասրուրականի:

Լուալ տիկինն Սիւնեաց, սրոյ անուն էր Բիւրեզ, եկն ընդ առաջ արքային Հերակլի եւ երարձ դանձս ոս- կոյ եւ հանդ (7բ) երձս պատուականս եւ բազում ձիս եւ

3. փոխ. ձեր: 4. փոխ. մերոյ: 5. 2. նը, պէտք էր՝ նա: 7. փոխ. յարուցեալ: 15. փոխ. տա: 17. 2. զմիայգետաց: 19. 2. գինին. Ոսկ. «բաւեալ թիկին»: 20. 2. տաքային»:

6. Ոսկեփ. «զի է եղեալ ի սենեակ արքային Խոսրովում մեծաւ պատուով: Եւ կան ի սպառու պաշտամոն խաչին խնկաւը և մոմենդինաւը եղան էմի Զաքարիայ և այլ ևս Բ. քոհանայիւք որ ընդ լսաչին եկին յեմէ և անդադար կան ի պաշտօն հրամանաւ արքային մերոյ: «Զի Աստուած քրիստոնէից է», ասէ Խոսրով արքայ: Այլ թէ կամիս, արարաց զքեզ հուզ առ տուն, յորում է խաչն և պաշտօնեայ նորա»: Զաքարիայի մասին Հմմտ. Սերէոս, գլ. իդ, 82. Ասողիկ. 93, 114, Վարդան, 61, Յովհ. կաթուզ. 74:

9. Ոսկեփ. «երկրպագեաց սր խաչին». 17. Ոսկեփ. «միաբանեալ գումարեաց զամենայն զօրս իւր՝ յՅունաց և զՀոռմէաց տոց, զՄիջագետաց և զՀայոց, զվրաց և զԱղւանից և գնացեալ ենաս ի յԱրտազ զաւրա»: 18. Արար, չունի «Քրանկաց»: 8. Արար. «եհաս յերկիրն նախճըւանայ»:

զջորիս և .մ. գուէնս պատերազմի և զէնս ոսկակուրս Դ՛. և սաղաւարտու .մ. և եքեր զհետ իւր արս պատերազմի: Եւ էր նայ կին գեղեցիկ և իմաստուն յոյժ և հաճեցոյց զարբայն Հեռակլ:

✓ 3 Խաղաց եկն էհաս ի աշխալին Պարսից և ընդ նմա բիւրս տասն արանց պատերազմովաց: Լւսու արքայն Քասրէ զգալն արքա (յ)ին Հոռոմոց և կազմեաց զաւրս իւր և ել ընդ առաջ նորա ի պատերազմն և զրել սազի ի դաշտին Թավլէժայ: Եւ հասին ի վերայ նորա դօրք Հոռոմոց և կալան զարքայն Պարսից զՔասրէ և կապեցին երկաթի կապանաւք և գնացին ի քաղաքն ուր էր բնակութիւն Քասրէի. և շրջայպատեցին զնա և երիս աւ(8ա)ուրս ասին զքաղաքն և քակեցին զամբոց: Եւ բացեալ զտուն գանձին եզիտ ի նմա զիրկաւ կան փայտ խաչին Քրիստոսի և ուրախ եղի ոյժ: Եւ արեալ բազում աւար և գերեաց զամենայն յերկիրն Պարսից և արար անապատ ի մարդոյ և ի անասնոյ և տարտւ ի գերութիւն:

✓ Եւ խաղաց գնաց բնակեցաւ ի Զարեւանդ զաւասի: 20 Եւ աղաչեաց Քասրէ զարքայն Հերակլ զի արձակեոցէ զնայ ի խաղաղութիւն ի կապանացն: Եւ զադարեցին ի տեղին աւուրս և. և շինել յեկեղեցի մի փոքրա-

1, 2. գ շարիտ: 1. փոխ. սոկելուսո: 14, 2. զամբոց. մոկ. զամուրսն 46, փոխ. տաեալ: 22. փոխ. փոքրազոյն:

1. Ոսկեփ. «զրախ մ. և զէնս ոսկեկուսս Դ՛ ... և այլս պատերազմող Գիլ» 6. Արար. «զօրք հեծելոցն բիւրք Ճ»:

17. Կիր. Գանձ. 51. «Հերակլէս զնաց յաշխարհն Պարսից, սպան զՄոսուրվ. զարձոյց և զուրբը խաչն և առաքեաց յեզմ».

18. Արար. «Եւ զտեալ զգրկական խաչն Քրիստոսի ժողովեալ ամենայն զօրացն երկրպագեցին նմա, և թագաւորն ինքն մատուցանէր խունկս և օրհնէր զԱստուած և ուրախութեամբ մեծաւ տօն մեծ կատարեցին զայն օր, որ է յունիս ամսոյ իւ: Ոսկեփ. «Սամմի ամսոյ Ժ»: ՏԱՐ. էջ 58, «Տաւնեցին նաւակատիս զաւր մեծ ի սեպտեմբերի ԺՓ, իսկ ի մեւսում աւուր զարձեալ աւանէին, որ աւը ԺԴ էր սեպտեմբերի ամսոյ»:

յոյն և կանինեցին ի նմա խաչ և զրեաց ի նմա զամբնայն իրս պատերազմի և ժամանակ թուականին: Եւ զիր տվեալ էր ի բաց միաբանութեան արքայն Հոռոմոց Հերակլ և արքայն (ՃԲ) Պարսից Քասրէ. և զրին զամանան տեղին և կոչեցին զանուն տեղային Հրամանուն:

✓ արայ: Եւ տպայ Հրաման եա արքայն Հերակլ զօրաց իւրոց և կուտեցին հող ի տեղին և արարին հողաբլուր բարձր և ի վերայ նորա արձակեաց զարքայն Պարսից:

11. Գարձաւ յերկիրն Հայոց և եկեալ բնակեցաւ յերկիրն և ի գաշտն Ճարմանացոյ, մօտ ի քաղաքն Սանտարկոյ որ Շաւարշան: Եւ եկեալ տիկինն Սումեաց ընդ առաջ արքային Հերակլի և բերեալ պատարագս բազումս առաւել քան զարաջինն: Եւ ասէ արքայն Հերակլ. «ով կին զու, ահազին աշխատեցար, ասայ ինձ զինչ արարից քեզ փոխարէն, ասա ինձ»: Ասէ տիկինն Սիւնեաց. «Ով արքայ, ոչինչ պիտ(9ա)ոյ է ինձ ի քէն»: Ասէ ցնայ արքայն Հերակլ. «որչափ մեծ ես զու, որ զաշխատութիւն քո տանիմ ես անձամբ իմով. ինզրեային(էն) աշխարհ կամ այց մեծազգի, տաց քեզ, և կամ գանձս ոսկոյ բազումս»: Ասէ տիկինն. «ոչինչ պիտոյ է ինձ ի ձեռաց քոց, արքայ, այլ եթէ կամիս տալ ինձ ՎՎՎ պարզեւս, տաեմ քեզ յառաջ թէ ում նմանեցուցի զիս կամ զքեզ»: Ասէ արքայն. «ասայ զի լոււցյօ: Ասէ տիկինն. «նման ես զու մարդոյ ճանապարհորդի և ես

11. փոխ. «Սիւնեաց», յաճախ:

2. Արար. «զի էր թուական Հայոց ՅԲ»:
6. Արար. Հրաման սարակ. Ուկեփ. Հրամանս արարաք.
7. Ոսկեփ. «Հող իւրաքանչիւր ձիատոպրակ միս»:
7. Ոսկեփ. և Արար. աւել ունին «Այլ նա ոչ եկաց ի բաննորա», զոր զարձեալ կալաւ զնա Հերակլ եսպան և երարձ զթագաւորութիւն Պարսից: Եւ ինքն զարձաւ ի Հոռմս ունելով զսուրբ խաչ յառաջի իւր»:

10. Արար. «Դարձաւ ի Հայս բնակեցաւ ի գաշտին Արտազու»:

20. Արար. «գաւառ, քաղաք և կամ զամանս ոսկոյ և արձաթոյ»: Ճիս և ջորիս»:
23. Ոսկեփ. «Ասա տիկին մայր իմ»:

նման եմ աւթեւանի ասպընջականի, որ դայ ի ճանա-
✓ պարհէ և նայ ընդէմ երթեալ ընդունի զնայ և զնէ
առաջի նորս սեղան և ամենայն ուժոյ իւրոյ կերակրէ
գայրն ճանապարհորդ, եւ նայ հանէ ընչից որ բարձեալ
ունիցի և տայ նմա որ ասպընջան իցէ: (9թ) Եւ արդ,
տէր իմ արքայ, թէ մասն ինչ տացես ի պարդեւաց քոց
գոր ունիս. թէ ոչ, չէ այլ ինչ պիտոյ»:

✓ ✓ ✓ Յուրաստ եկաց արքայն և առէ. «ոչ կարեմ տալ
քեզ զոր խնդրեստօ: Եւ արև տիկինն, յերկրէպագ ար-
40 գային և առաջեալ զնաց զճանապարհն իւր: Եւ ասաց
արքայն Հերակլ. «զի՞նչ արարից վասն բարեպաշտ տոհ-
մին և հաւատարիմ կնոջ Սունեաց, քանզի բազում
ծախս էնան ի գրանն իմ և գարձաւ գնաց արտում և
դարտակ. չարիս գործեցի»:

12. Եւ անդ էր Յոհան Մարտգոմեցի, այր փիլի-
ստիայ և արքայն սիրեր զնայ վասն սրբութեան իւրոյ:
Ասաց Ոհան, «տէր իմ արքայ, ապայ զի՞արդ ոչ կատարե-
ցեր զինդիրս նորա»: Եւ առէ արքայն Հերակլ. «զի՞արդ
կարացից սուր մերցեցուցանել ի կեն(10ա)սափեր վայտ
20 խաչին Քրիստոսի որ այսչափ աշխատութեամբ կարի
թափել զայդ ի գերութէնէն Պարսից»: Եւ առէ Ոհան.
«ով արքայ, զոր առեմ լուր ինձ. դիր զուրըն ի պահա-
րան խաչին և ասայ ցտիկինն Սիւնեաց և նայ աղօթս
ՎՎ Վ արտացէ. և եթէ կամ լիցի սրբոյ նշանին, տացէ նմա
25 հոգին սուրբ ի ձեռն հայցուածին իւրոյ»: Լւաւ արքայն
Հերակլ և յդարկեաց դարձոյց զտիկինն Սունեաց և
առէ ցնայ. «ով կին, մեծ հոգս եղեր զուր ինձ. և արդ
դըն(եմք) զուրըն ի պահարան խաչին և առ զեպիսկո-

7. 2. չէ: 9. փոխ. յարեաւ տիկինն, երկիրեպագ արքային. Արար. «Յա-
զօթս եկաց առաջի սուրբ խաչին»: 12. 2. կնոշ: 16. փոխ. սիրէր:
20. փոխ. կարացի: 13. 2. «պահարան» կրկնւած է: 25: 2. ձեր. Արար.
«ձեռամբ սուրբ հոգւոյն»: 28. 2. զըն. Արար. «Եկ դնեմք սուրբ»:

11. Արար. «յաղակս բարետոնմա:

15. Ոսկեփ. Արար. «Մայրավանեցին»:

16. Արար. «վարդապետ առաքինի»:

պատունսդ և զքահանայսդ և արասցես յաղօթս. և եթէ
հաճոյ թվեսցէ տեսան Աստուծոյ քո՝ տացէ քեզ ըստ
հաւատոց մասն ի խաչալիփայտէն իւրմէ»:

Եւ յերկիր էպագ տիկինն(10թ) արքային. Յայնժամ
հրամայեաց բերել զնշան խաչին և բացեալ զարկդն ոս-
5. կի, կազմած ակամք պատուականաւք, յորում կայր
փայտն սուրբ. և եղեալ ի նմայ սուր և կնքեաց զնայ
մատանեաւ իւրով արքայն: Եւ եղե ի մտանելն արե-
գականն եկին առաջի սուրբ նշանին եպիսկոպոսունս
թժամնք և Յոհանն Մարտգոմեցի և քահանայք բա-
զումք և հսկեցին զիշերն տմենայն բազում աշխա-
տութեամբ մինչի առաւտւան: Եւ տպայ (եկն) Հերակլ
թագաւորն և բացեալ պահարան խաչին տեսանէր յեր-
կուս մասունս հատան ի խաչէն և զարմացաւ ընդ հա-
ւատս կնոյն: Եւ առէ արքայն. «ով կին զուր, մեծ են
հաւատ քո և երանի է վիճակի կուսաւորչին(11ա) սրբոյն
Գրիգորի»:

13. Եւ առեալ տիկինն զնշան խաչին որ շնորհեցաւ
նմա Աստուծոյ և յառաջեաց զնաց ի տուն իւր: Եւ
իբրի զնաց զճանապարհն իւր և անցեաւ ընդ դաշան, 20.
զոր Հացիւն ասեն և մինչդեր երթայր զճանապարհն իւր
յանկարծակի նստաւ յորին որում կայր նշան խաչին
սոկիապատ կարքն: Եւ ոչ եղե հնար շարժել զնայ ոչ
եպիսկոպոսաց և ոչ ի քահանայից, նայ և ոչ տիկինն յոր-
ժամ էտո ի գիրկն զուկի զոկեսինն, յորում կայր նշան 25.
սրբոյ խաչին Քրիստոսի, ոչ կարաց շարժել ի տեղոյէն:

10. 2. փոխ. երկոտասանք: 11. փոխ. զիշերն: 12. Արար. «պաղատանք»:
սաղմսսիք և օրհնութեամբ»: 13. 2. տերանէր. Արար. «տեսին»: 18. 2. զոր:
24. փոխ. մինչդեռ: 22. փոխ. ջորին: 23. փոխ. կարքն:
26. փոխ. ի տեղոյէն:

3. Արար. «Տացէ քեզ մասն ըստ հաւատոց քոց»:

7. Ոսկեփ. «ունական մատանեաւ». Արար. «դանակ»:

12. Արար. «Պաղատանք»:
սաղմսսիք և օրհնութեամբ»:

21. Արար. «ընդ գաշտն Հացունեաց»: Թ. Ալծրունի էջ 88 Կնրա-
նից վարդան էջ 59 ունին «Հացիւն»: նաև Յ. կաթողիկոս, էջ 68:

Լայր յորդահոս արտասուօք և ասեր. «ով տէր իմ Յիսուս Քրիստոս, զի՞ զրկեցեր զիս ի ցանկալի գանձուց որ ինձ աւանդեցեր. զի կամէի տանել զսայ ի բնակութիւն հարցն իմոց, այլ դու նոյն տէր ես և այս սով(11ը)որութիւն է քս, թէ «այլք վաստակեցեն և այլք կերիցեն և այլք բնակեցեն»:

Եւ տպայ եկն այր մի միայնակեց, որ բնակեալ էր ի վերայ լերին, և եկեալ ասէ ցտիկինն. «ով բարեզպաշտուհի տիկին, հրամայեաց Աստուած բնակիլ սրբոյ նշանիդ յայսմ տեղոյն»: Եւ սկսաւ և շինեաց տիկինն տեղի վանաց սրբոյ նշանին և գնեաց զբեռդն, որ չացին կոչեն, և ըդմունքն բերոդ և ետ ի վանքն սրբոյ նշանին և ինքն գնաց տշխարհն իւրեանց:

14. Իսկ արքայն չորոմոց չերակլ՝ առեալ գնշան խաչն եկն ի կարնոյ քաղաքն և տվեալ զփայտն սուրբ ի կոստրնդին և ի Թէոյդաս որդին իւր և տսէ. «գնացեք դուք ի քաղաքն յերուսաղէմ և դիք սուրբ զփաչն ի Գողգոթայ ի աեղոյն յորում խաչեցաւն Քրիստոս(12ա): Եւ կատարեցէք ուխտ մեծ Աստուածոյ և փառաւորեցայք գնշան խաչին»:

Եւ իբրև նոքայ գնացին և մօտ եղեն ի քաղաքն

1. փոխ. տսէր: 3. 2. աւանդեցի, Արար. «չնորհեցեր»: 5. 2. այլ, 7. Արար. «լերինն Հացունեաց: 41. փոխ. բերդն: 12. փոխ. բերդ. նոկեփ, «և զունդն բերդին».

8. Արար. «ի լերինն Հացունեաց»:

10. Արար. «գնեաց զաւանն Հացունեաց և զըսունդն աւանին ետ վանացն, և զօրն դայն յորում նստաւ ջորին կամաւ սուրբ նշանին, մեծահանդէս տօն կարգեցին և ամ յամէ զնոյն առնել զինմամբ խոյց և զուարակաց ի պատիւ ս՝ը նշանին»: Վերջ Առատի յօդւածի:

12. Ոսկիփ. «ի տեղի իւր և գաւառն Սիւնեաց»:

13. Ոսկ. սկսում է նոր զլուխ. «Պատմութիւն սուրբ խաչափայտին Քրիստոսի, թէ որպէս տարաւ չերակլ արքայ ի Թաւրիդոյ ի կոստանդինուպաւլիս. իսկ արքայն չերակլ յետ տալոյ զսուրբ մասն կենսատու խաչին Բիւրեղ տիկնոցն ...»

